ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/1-1

ք. Մարալիկ «08» ապրիլի_2019թ.

<<Մարալիկի առողջության կենտրոն >> ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն՝ Վռամ Մելիքյանի, որը գործում է <<Մարալիկի առողջության կենտրոն >> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Արֆարմացիա>> ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __1__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.1 Պայմանագրի գինը կազմում է **487218,4 (չորս հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր տասնութ ամբողջ չորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրում կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Մարալիկի ԱԿ>> ՓԲԸ	<<Արֆարմացիա>> ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Ք. Երևան, Ռաֆֆու 111
Հ. Շահինյան 1	<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
ՎՏԲ Հայաստան բանկ մարալիկի մ/ճ	Հ/Հ 163008100220
Հ/Հ16003001178900	ՀՎՀՀ 02505735
ՀՎՀՀ 06001341	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N
«08» ապրիլի 2019թ. կնքված
ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
...ավերով ...ախատեսված ...ափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***	
1	33661125	Նատրիումի մետամիզոլ 50% 2մլ	ՀՀ	Նատրիումի մետամիզոլ 50% 2մլ	սր	30,65	61300	2000	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:	
2	33671130	Դիֆենհիդրամին լուծույթ 1 % 1մլ	ՀՀ	Դիֆենհիդրամին, ամոնիումի քլորիդ diphenhydramine, ammonium chloride օշարակ 1.992մգ/մլ+	սր	21,46	42920	2000	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից	

				19.92մգ/մլ							պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
6	33691138	Գլյուկոզա լուծույթ ներարկման 5% 250մլ	ՀՀ	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 250մլ	փաթեթ	230	4600	20	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
7	33691138	Գլյուկոզա լուծույթ 40 % 5մլ	ՀՀ	Գլյուկոզա լուծույթ 40 % 5մլ	սր	33,7	5055	150	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
8	33691138	Գլյուկոզա լուծույթ 10 % 100մլ	ՀՀ	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 100մլ	փաթեթ	220	4400	20	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

9	33691129	Նատրիումի քլորիդ լուծույթ ն/ե 0.9% 500մլ	ՀՀ	Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 500մլ	փաթեթ	240	60000	250	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
11	33691129	Նատրիումի քլորիդ լուծույթ 0.9% 5մլ	ՀՀ	Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 5մլ	սր	30,66	30660	1000	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
12	33691112	Մետրանիդազոլ լուծույթ ներարկման 0.5% 100մլ	ՀՀ	Մետրոնիդազոլ, metronidazole լուծույթ ն/ե կաթիլաներարկման 5մգ/մլ, 100մլ	ֆլ	210	16800	80	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

14	33691129	Ռինգերի լուծույթ 500մլ	ՀՀ	Նատրիումի ացետատ, նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ , մագնեզիումի քլորիդ sodium acetate, sodium chloride, potassium chloride, calcium chloride, magnesium chloride լուծույթ կաթիլաներարկման 5մգ/մլ+5,85մգ/մլ + 0,302մգ/մլ+ 0,36մգ/մլ+0,25մգ/մլ, 500մլ	փաթեթ	240	36000	150	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
15	33691176	Օսլադեքս 6% 500մլ	ՀՀ	Դեքստրան 70 dextran 70, լուծույթ կաթիլաներարկման, 60մգ/մլ, 500մլ	փաթեթ	2100	42000	20	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

16	33691145	Մագնեզումի սուլֆատ լուծույթ ներարկման 25% 5մլ	ՀՀ	Մագնեզիումի սուլֆատ magnesium sulfate, լուծույթ ներարկման, 250մգ/մլ, 5մլ	սր	30,67	21469	700	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
24	33671115	նովոկային 0,5% 250մլ	ՀՀ	նովոկային 0,5% 250մլ	ֆլ	500	25000	50	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

25	33671115	նովոկային 0,5% 5մլ	ՀՀ	նովոկային 0,5% 5մլ	սր	30,66	38325	1250	ՀՀ Շիրակի մարզ Քրմալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
29	33671114	Էուֆիլին 2.4 % 5մլ	ՀՀ	Էուֆիլին 2.4 % 5մլ	սր	36,78	17654,4	480	ՀՀ Շիրակի մարզ Քրմալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

36	33661114	Ֆենտանիլ 0.005%	Ուկրաին ա	Ֆենտանիլ fentanyl, լուծույթ ներարկման, 0,05մգ/մլ, 2մլ	սր	420	16800	40	ՀՀ Շիրակի մարզ Քրիստափոր Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
40	33611350	Ասկորբինաթթու 0.5 % 5 .0մլ	ՀՀ	Ասկորբինաթթու, ascorbic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 5մլ	սր	49,05	34335	700	ՀՀ Շիրակի մարզ Քրիստափոր Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

44		Պապավերին ն հիդրոքլորիդ		Պապավերին papaverine լուծույթ ներարկման 20մգ/մլ 2մլ ամպուլ	սր		29900	1000	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվումմատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամՊ ատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
	33621540		Բելառուս			29,9					

պրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի վարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ոված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ապրանքների տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ
Ն նախարարի 2010թ. 17-Ն հրամանի

ապրանքների պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ամկետ,
մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող ապրանքները հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն կու երրորդը,
առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, ապրանքների սպառման համար ահմանված պիտանիության կարճ ժամկետները, ապրանքները հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ կրորդը:

ԳՆՈՐԴ

<<Մարալիկի ԱԿ>> ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Երևան, Ռաֆֆու 111

Հ. Շահինյան 1
ՎՏԲ Հայաստան բանկ մարալիկի մ/ճ
Հ/Հ16003001178900
ՀՎՀՀ 06001341

/ստորագրություն/
Կ.Տ

<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«08» ապրիլի 2019թ. կնքված
ՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Վճարման ժամկետը/վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

ԳՆՈՐԴ

<<Մարալիկի ԱԿ>> ՓԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ
Հ. Շահինյան 1
ՎՏԲ Հայաստան բանկ մարալիկի մ/ճ
Հ/Հ16003001178900
ՀՎՀՀ 06001341

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Երևան, Ռաֆֆու 111
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735

/ստորագրություն/
Կ.Տ